



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ***Արդյունաբերական սեփականություն***

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

**No 2 (38)**

ՄԱՍ 1  
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности  
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ  
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում գետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2006 թվականի հունիսի 15-ից

Երեւան 2006

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ .....	4, 103
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....	6, 105
ՕԳՏԱԿԱՐ ՍՈՂԵԼՆԵՐ .....	28, 124
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....	30, 126
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ.....	32, 128
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	34, 130
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....	35
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին .....	37
Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման	
գործողության երկարաձգման մասին .....	68
ՑՈՒՑԻՉՆԵՐ .....	90
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	93
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ .....	131

### ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....	4
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին .....	6

Հրատարակվում է Մտավոր սեփականության  
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной  
собственности с 1995г.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. 563-267 отдел приема заявок  
Тел. 561-126 отдел информационно-технологического  
обеспечения

Internet: <http://www.arnpatent.org>

E-mail: [arnpat@cornet.am](mailto:arnpat@cornet.am)

**СОДЕРЖАНИЕ****CONTENTS**

ЧАСТЬ 1		PART 1	
<b>ИЗОБРЕТЕНИЯ</b>	4, 103	<b>INVENTIONS</b>	
Сведения о выданных патентах	6, 105	Information on granted patents	
<b>ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ</b>	28, 124	<b>UTILITY MODELS</b>	
Сведения о выданных патентах	30, 126	Information on granted patents	
<b>ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ</b>	32, 128	<b>INDUSTRIAL DESIGNS</b>	
Сведения о выданных патентах	34, 130	Information on granted patents	
<b>ТОВАРНЫЕ ЗНАКИ</b>	35	<b>TRADE MARKS</b>	
Сведения о зарегистрированных товарных знаках и знака обслуживания	37	Information on registered trade marks and service marks	
Сведения о продлении действия регистрации товарных знаков	68	Information on renewal of effect of trademark registration	
<b>УКАЗАТЕЛИ</b>	90	<b>INDEXES</b>	
<b>СООБЩЕНИЯ</b>	93	<b>REPORTS</b>	
<b>ДВУБУКВЕННЫЕ КОДЫ</b>	131	<b>TWO-LETTER CODES</b>	
ЧАСТЬ 2		PART 2	
<b>ТОВАРНЫЕ ЗНАКИ</b>	4	<b>TRADE MARKS</b>	
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	6	Information on registered trade marks and service marks	

**ԳՅՈՒՏԵՐ**

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
  - 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
    - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
    - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
    - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
  - 21 *հայտի համարը*
  - 22 *հայտի ներկայացման թվականը*
  - 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
  - 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
  - 31 *առաջնային հայտի համարը*
  - 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
  - 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
  - 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
  - 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
  - 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
  - 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
  - 54 *գյուտի անվանումը*
  - 56 *տեղեկատվության աղբյուրներ*
  - 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
  - 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
  - 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
  - 71 *հայտատուն, երկրի կոդը*
  - 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
  - 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
  - 74 *արտոնագրային հավատարմատար*
  - 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
  - 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
  - 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*
-

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1752 (13) A2

**A01B 43/00**

**B65G 17/06**

(21) P20050154 (22) 15.08.2005

(42) 01.11.2005

(71) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM)

(72) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM)

(73) Բելլա Վազգենի Բաբայան, Երեւան, Աբեյյան 9, բն. 22 (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան, Երեւան, Աբեյյան 9, բն. 22 (AM), Աննա Արմենի Վանյան, Երեւան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM)

(54) **Քարհավաք մեքենայի գատիչ փոխակրիչ**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը:

Քարհավաք մեքենայի գատիչ փոխակրիչն ունի շրջանակ, դրան ամրակցված տանող եւ տարվող լիսեռներ՝ իրենց երկուական աստղանիվներով, գատիչ օղակներ, որոնք հողակապորեն ամրակցված են իրար զուգահեռ շարժվող երկու քարշիչ շղթաներին սեփական քաշի տակ ուղղաձիգ դիրք ընդունելու հնարավորությամբ, ինչպես նաեւ քարշիչ շղթաներին ամրակցված հենամատներ: Չատիչ օղակները հողակապերով ամրակցված են քարշիչ շղթային իրենց զրոյական բարձրության վրա, իսկ գատիչ օղակները մեկընդմեջ իրենց ազատ ծայրամասում ունեն կառչաններ:

Բարձրացվում է փոխակրիչի գատիչ ունակությունը եւ աշխատանքի հուսալիությունը, պարզեցվում է կառուցվածքը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1753 (13) A2

**A01G 1/00**

(21) P20050186 (22) 29.09.2005

(42) 01.12.2005

(71) Վիգո Արամի Դավթյան (AM)

(72) Վիգո Արամի Դավթյան (AM), Գարեգին Գաբրիելի Գաբրիելյան (AM), Ժաննա Յովիկի Յովակիմյան (AM), Արթուր Գագիկի Պետրոսյան (AM)

(73) Վիգո Արամի Դավթյան, 0012, Երեւան, Զ. Էմինի 68 (AM)

(54) **Կաղամբի աճեցման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բանջարաբուծությանը, մասնավորապես՝ կաղամբների աճեցման եղանակներին:

Առաջին տարվա բերքահավաքից հետո կաղամբակոթունների ձմեռային պահպանումը իրագործում են անմիջապես դաշտում, թողնելով կաղամբակոթունները արմատային համակարգով հողում: Գարնանը կաղամբակոթուններից հեռացնում են վերին յարովիզացված մասը: Աճած ընձյուղներից հեռացնում են թույլ զարգացածները՝ թողնելով 2-3 լավ զարգացածները: Երկրորդ տարվա աշնանը կատարում են բերքահավաք, որի ժամանակ հողից հանում են ամբողջ բույսը:

Որպես կաղամբ օգտագործում են տերեւակաղամբը:

Պարզեցվում է տերեւակաղամբի աճեցման եղանակը, բարձրացվում է բերքատվությունը:

(51) (2006) (11) 1754 (13) A2

**A01K 39/00**

(21) P20050160 (22) 23.08.2005

(42) 01.12.2005

(71) Շահեն Մեհրաբյան (AM), Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հայաստանի թռչուններ» նախագիծ (AM)

(72) Շահեն Մեհրաբյան (AM)

(73) Շահեն Մեհրաբյան, Երեւան, Սեւակի 13/2 (AM), Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հայաստանի թռչուններ» նախագիծ, Երեւան, Բաղրամյան 40 (AM)

(54) **Թռչունների կերաման**

(57) Կերամանն ունի հատակ, տանիք, կողային հենակներ եւ մուտքի հարթակ: Հատակը եւ տանիքը կիսազլանաձեւ են: Մուտքի հարթակը երկայնական է եւ ծայրերով ամրակցված է կողային հենակներին:

Պարզեցվում է կերամանի կառուցվածքը, մեծացվում է տարողունակությունը, 1 նկ.:

- (51) (2006) (11) 1755 (13) A2  
**A23B 4/00**  
**A23B 4/02**  
**A23L 1/31**
- (21) P20050211 (22) 29.11.2005  
 (42) 04.01.2006  
 (71) Ռազմիկ Արշակի Բեգլարյան (AM), Յայկ Յամլետի Յովսեփյան (AM)  
 (72) Ռազմիկ Արշակի Բեգլարյան (AM), Յայկ Յամլետի Յովսեփյան (AM)  
 (73) Ռազմիկ Արշակի Բեգլարյան, Երեւան, Արաբկիրի 21-րդ փող. 1, բն. 56 (AM), Յայկ Յամլետի Յովսեփյան, Երեւան, Ավան թաղամաս, Թումանյան հատված 6/1, բն. 48 (AM)
- (54) **Մսային պահածոների արտադրության եղանակ եւ բաղադրանյութ**
- (57) Գյուտը վերաբերում է մսի արդյունաբերությանը, մասնավորապես մսային պահածոների արտադրության եղանակներին:
- Մուգ պինդ չոր (DFD) հատկանիշներով տավարի սառեցված միսն ապաստանեցնում են, մանրացնում, ընդ որում մանրացված մսի զանգվածի ջերմաստիճանը պահպանում են 1°C ոչ ցածր, ավելացնում կերակրի աղ, նուրբ մանրացված գլուխ սոխ, արմավածեթ, սեւ պղպեղ, դափնետերեւ, սննդային հավելույթ, ջուր եւ խառնում: Որպես սննդային հավելույթ օգտագործում են դոնդողա- եւ կառուցվածքագոյացիչ հատկություններ ունեցող եւ կապակառագենան E 407, թանձրացուցիչ E 412, դոնդողագոյացիչ E 415, E 508 ու գլյուկոզ ներառող «Гелеон 183 М» հավելույթը: Ստացված խառնուրդը չափածրարում են, գլոցածալում, մանրեագրվում եւ հովացնում: Մսային պահածոյի բաղադրանյութը ներառում է բաղադրամասեր հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)` DFD հատկանիշներով տավարի միս` 80,0-82,0, արմավածեթ` 6,0-10,0, գլուխ սոխ` 4,3-5,2, կերակրի աղ` 1,5-2,0, սննդային հավելույթ «Гелеон 183 М»` 0,3-0,8, սեւ պղպեղ` 0,01-0,025, դափնետերեւ` 0,02-0,04, ջուր` 5,0-7,0:
- Երկարացվում է պահածոների պահպանման ժամկետը, բարձրացվում է սննդային արժեքը 2 անկախ կետ:

- (51) (2006) (11) 1756 (13) A2  
**A23C 9/12**
- (21) P20050166 (22) 08.09.2005  
 (42) 01.12.2005  
 (71) Ռոզա Մադոյան (AM), Յուրիկ Կարապետյան (AM)  
 (72) Ռոզա Մադոյան (AM), Յուրիկ Կարապետյան (AM)  
 (73) Ռոզա Մադոյան, 0012, Երեւան, Վաղարշյան 20/1, բն. 40 (AM), Յուրիկ Կարապետյան, 0012, Երեւան, Վաղարշյան 16, բն. 4 (AM)
- (54) **Կաթնաթթվային մթերքի չոր մերանի ստացման եղանակ**
- (57) Յայտարկվում է կաթնաթթվային մթերքի արտադրության համար չոր մերանի ստացման եղանակ, ըստ որի մանրեագրված կաթը հովացնում են մինչեւ 30-38°C ջերմաստիճան, ավելացնում են 1-3% մերան եւ կուլտիվացնում 2,5-8 ժամվա ընթացքում: Մերված կաթը սառեցնում են (-40)-(-50)°C ջերմաստիճանում 10-12 ժամվա ընթացքում եւ չորացնում վակուումացնողումային եղանակով 20-24 ժամ: Որպես կաթ օգտագործում են կովի եւ/կամ գոմեշի եւ/կամ այծի եւ/կամ ոչխարի կաթը:
- Երկարացվում է կաթնաթթվային մթերքի մերանի պահպանման ժամկետը:

- (51) (2006) (11) 1757 (13) A2  
**A61B 17/00**
- (21) P20050206 (22) 16.11.2005  
 (42) 01.12.2005  
 (71) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)  
 (72) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)  
 (73) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)  
 (74) Է. Նահապետյան
- (54) **Դիաֆիզային սեզմենտային էնդոպրոթեզ**
- (57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային: Էնդոպրոթեզն ունի կազմովի մետաղյա կրող ձող եւ դրան միացված առանձին օղակների տեսքով ֆտորոպլաստից պատրաստված ոսկրի մարմինը փոխարինող սեզմենտ: Կրող ձողն ունի պարուրակավոր միացություններով միացված վերին, ստորին եւ միջին մասեր: Միջին մասը կազմված է երկու ձողիկից, որոնք միացված են ծայրերում հակադարձ պարուրակներ եւ միջին մասում միջանցիկ անցք ու-

ևեցող միջանկյալ տարրի միջոցով: Վերին ու ստորին մասերն ունեն ոսկրածուծային ուղի մտցվող կցաններով պարուրակավոր ծայրեր:

Ապահովվում է Էնդոպրոթեզի չափերի կարգավորումը վերին եւ ստորին վերջույթների սեգմենտար դիաֆիզային արատների վերականգնման ժամանակ՝ անկախ ոսկրի հեռացված տեղամասի երկարությունից, 3 նկ.:

(51) (2006) (11) **1758** (13) **A2**  
**A61B 17/00**

(21) P20050205 (22) 15.11.2005

(42) 01.12.2005

(71) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)

(72) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)

(73) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)

(74) Է. Նահապետյան

(54) **Կոնքազդրային հողի քացախափոսի վերականգնման սարք**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային: Սարքը պատրաստված է ճկելի թիթեղից, ունի վեցճառագայթային աստղի ձև, որի ճառագայթներից մեկը խաչաձև է: Ճկելով թիթեղն անմիջապես ոսկրի վրա, ճշգրտորեն մոդելավորում են քացախափոս եւ կատարում ցեմենտային պրոթեզավորում:

Ապահովվում է սարքի մոդելավորման եւ հուսալի սեւեռման հնարավորությունը, 5 նկ.:

(51) (2006) (11) **1759** (13) **A2**  
**A61B 17/00**

(21) P20050204 (22) 15.11.2005

(42) 01.12.2005

(71) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)

(72) Արմեն Վաչագանի Այվազյան (AM), Վաչագան Պետրոսի Այվազյան (AM), Վաչե Գեւորգի Յամբարձումյան (AM)

(73) Արմեն Վաչագանի Այվազյան (AM)

(74) Է. Նահապետյան

(54) **Քացախափոսի վերականգնման եղանակ**

(57) Քացախափոսի հետին եզրի եւ տանիքի պարագծով ոսկրային հյուսվածքի մեջ պատվաստում են կորտիկալ եւ սպունգային ամրանավորող պտուտակներ, այնուհետեւ քացա-

խափոսը լցնում են ոսկրային ցեմենտով եւ պատվաստում քացախափոսային գավաթը:

Պարզեցվում է քացախափոսի վերականգնման պրոցեսը, 5 նկ.:

(51) (2006) (11) **1760** (13) **A2**

**A61B 17/00**

(21) P20050192 (22) 13.10.2005

(42) 01.12.2005

(71) Յայկ Ազատի Մինասյան (AM), Գեորգի Գրիգորի Օկոեւ (AM), Իրինա Ջահանի Ջազանյան (AM), Նինել Ֆիլիպի Գուսակովա (AM)

(72) Յայկ Ազատի Մինասյան (AM), Գեորգի Գրիգորի Օկոեւ (AM), Իրինա Ջահանի Ջազանյան (AM), Նինել Ֆիլիպի Գուսակովա (AM)

(73) Յայկ Ազատի Մինասյան, 0014, Երեւան, Մամիկոնյանց 38, բն. 38 (AM), Գեորգի Գրիգորի Օկոեւ, 0033, Երեւան, Ա. Յակոբյան 2, բն. 8 (AM), Իրինա Ջահանի Ջազանյան, 0086, Երեւան, Արտաշիսյան 60, բն. 23 (AM), Նինել Ֆիլիպի Գուսակովա, 0086, Երեւան, Արտաշիսյան 60, բն. 23 (AM)

(54) **Մարդու օրգանիզմի տարբեր մակարդակի իմունաբանական դիմադրողականության կամ ռեակտիվության բարձրացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ կարող է օգտագործվել խրոնիկական վարակներով անաշխույժ ընթացող վարակիչ հիվանդությունների, չապաքինվող վերքերի, տարբեր ծագում ունեցող տրոֆիկ խոցերով հիվանդների բուժման ժամանակ, ինչպես նաեւ առողջ մարդկանց մոտ կանխարգելիչ նպատակներով:

Իմունառեակտիվության տարբեր աստիճաններ ստանալու համար մարդուն ներարկում են նույն կամ տարբեր խմբերի դոնորական արյուն՝ ենթամաշկային կամ միջմկանային ձեւով՝ 2-20 մլ դեղաչափով, 3-7 օրյա միջակայքով, 4-10 ներարկումով: Որպես դոնորական արյուն օգտագործում են նույն կամ տարբեր խմբերի (անտիգենհամատեղելի եւ անտիգենանհամատեղելի) դոնորի արմնկային երակից վերցրած արյունը կամ պորտալարաընկերջային արյունը:

Բարձրանում է բուժման արդյունավետությունը:



(51) (2006) (11) 1761 (13) A2

**A61C 7/00**

(21) P20050147 (22) 09.08.2005

(42) 01.11.2005

(71) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(72) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(73) Պավել Դանիելի Մայիլյան, Երեւան, Վահր. Փափազյան 22, բն. 21 (AM)

(54) **Ատամնաավելուլային աղեղի շտկման սարք (տարբերակներ)**

(57) Շտկման սարքն ունի լեզվային եւ անդաստակային մետաղալարե ուժային հանգույցներով միացված ամրակցման տարրեր, որոնք իրականացված են կողմնային սեգմենտների ատամներն ընդգրկող մետաղալարե կարկասների տեսքով եւ ձեւավորված են միմյանց հետ միջակապերով միացված՝ ատամների մի կողմից դրանց պարանոցի մոտ տեղակայված եւ ատամների հակառակ կողմից դրանց բարձրությամբ տարակենտրոնացված, լեզվային եւ անդաստակային տարրերից, եւ ֆրոնտալ սեգմենտի վրա տեղադրված մետաղալարե կարկաս:

Շտկման սարքի առաջին տարբերակում ամրակցման տարրերի եւ ֆրոնտալ սեգմենտի մետաղական կարկասներն իրար հետ կապված են լեզվային եւ/կամ անդաստակային զսպանակներով:

Շտկման սարքի երկրորդ տարբերակում ֆրոնտալ սեգմենտի վրա տեղադրված մետաղալարե կարկասն անմիջականորեն եւ/կամ զսպանակներով միացված է լեզվային աղեղին, իսկ ամրակցման տարրը կամ ամրակցման տարրերը հավելյալ միացված են լեզվային աղեղի հետ զսպանակներով:

Շտկման սարքի երրորդ տարբերակում ֆրոնտալ սեգմենտի վրա տեղադրված մետաղալարե կարկասը զսպանակներով միացված է լեզվային աղեղին, իսկ ամրակցման տարրը կամ տարրերը միացված են ֆրոնտալ սեգմենտի մետաղալարե կարկասի եւ հավելյալ լեզվային աղեղի հետ զսպանակներով:

Ապահովվում է ավելուլային ելունի եւ ատամնային աղեղի շտկումը, 3 անկախ կետ, 4 նկ.:

(51) (2006) (11) 1762 (13) A2

**A61C 7/00**

(21) P20050148 (22) 09.08.2005

(42) 01.11.2005

(71) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(72) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(73) Պավել Դանիելի Մայիլյան, Երեւան, Վահր. Փափազյան 22, բն. 21 (AM)

(54) **Վերին ծնոտի ձեւի շտկման սարք (տարբերակներ)**

(57) Շտկման սարքն ունի ատամնաշարի կողմնային սեգմենտի վրա ամրակցման տարրեր, որոնք իրականացված են սեգմենտի ատամներն ընդգրկող մետաղալարե կարկասների տեսքով եւ դրանց միացված երկու՝ քմային միջնակարի կողմերում տեղադրված եւ քմային մետաղալարե ուժային տարրի կամ տարրերի միջոցով իրար կապված թիթեղներ:

Շտկման սարքի առաջին տարբերակում թիթեղներն ամրակցման տարրերի հետ միացված են զսպանակների միջոցով:

Շտկման սարքի երկրորդ տարբերակում թիթեղները միացված են կողմնային սեգմենտների ամրակցման տարրերի հետ զսպանակների միջոցով, իսկ ֆրոնտալ սեգմենտի ամրակցման տարրը զսպանակով միացված է քմային մետաղալարե ուժային տարրի հետ:

Շտկման սարքի երրորդ տարբերակում ամրակցման տարրերը միացված են իրար ու թիթեղների հետ քմային աղեղով՝ զսպանակների միջոցով:

Ապահովվում է վերին ծնոտի ատամնաավելուլային եւ բազալային աղեղների ձեւի շտկումը, 3 անկախ կետ, 4 նկ.:

(51) (2006) (11) 1763 (13) A2

**A61C 7/00**

(21) P20050149 (22) 09.08.2005

(42) 01.11.2005

(71) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(72) Պավել Դանիելի Մայիլյան (AM)

(73) Պավել Դանիելի Մայիլյան, Երեւան, Վահր. Փափազյան 22, բն. 21 (AM)

(54) **Ծնոտի արատների չբավարարող հյուսվածքների աճի խթանման եղանակ եւ դրա իրականացման սարք**

(57) Ըստ հայտարկվող եղանակի արատը ծածկում են թիթեղով, թիթեղին տատանողական շարժումներ հաղորդելով գրգռում են արատի

եզրերը եւ պարբերաբար շտկելով թիթեղի աշխատանքային մակերեսը, տարածություն են ազատում հյուսվածքների նորագոյացումների համար:

Հայտարկվող եղանակի իրագործման սարքն ունի կողմնային սեզմենտների ատամների ամրակցման տարրեր, արատի չբավարարող հյուսվածքները ծածկող թիթեղ կամ թիթեղներ եւ լեզվային աղեղ, որը զսպանակների միջոցով միացված է ամրակցման տարրերին եւ թիթեղին կամ թիթեղներին: Ամրակցման տարրերը իրականացված են մետաղալարե կարկասների ձևով, որոնց տարրերը կողմնային ատամների վզիկները լեզվային եւ անդաստակային կողմերից ընդգրկած միացված են միջակապերով, ընդ որում միջակապերը տեղադրված են միջատամնային տարածությունում, ինչպես նաեւ ատամներ միջելուստային փոսորակներում սազիտալ եւ/կամ տրանսվերսալ ուղղություններով:

Ապահովվում է ծնոտների չբավարարող հյուսվածքների արատների վերացումը, 2 անկախ կետ, 2 նկ.:

(51) (2006) (11) **1764** (13) **A2**  
**A61C 8/00**

(21) P20050165 (22) 06.09.2005

(42) 01.12.2005

(71) Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM),  
Հայկ Դավթի Ենոքյան (AM)

(72) Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM),  
Հայկ Դավթի Ենոքյան (AM)

(73) Արմեն Մարտինի Մարտիրոսյան, Երեւան,  
Շիրակի 13, բն. 28 (AM), Հայկ Դավթի Ենոքյան,  
Երեւան, Գալշոյան 55/12, բն. 1ա (AM)

(54) **Ենթավերնոսկրային ատամնային իմպլանտատ**

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային:

Իմպլանտատն ունի տիտանից պատրաստված հենարանային տարր, վզիկով գլխիկ եւ ներքին պարուրակով միացման տարր, որը կոշտ ամրացված է հենարանային տարրի մեջ: Գլխիկը հանովի է եւ ներպտուտակված է միացման տարրի մեջ: Իմպլանտատի գլխիկը կարող է պատրաստվել պտուտակային իմպլանտատի տեսքով, իսկ միացման տարրը՝ հենարանային տարրի դեպի ներս ուղղված մակառնիկի ձևով կամ ականոցի ձևով:

Կայունացվում է իմպլանտատը, բարձրացվում է իմպլանտատի կիրառման եւ բուժման արդյունավետությունը, 7 նկ.:

(51) (2006) (11) **1765** (13) **A2**  
**A61F 2/24**

(21) P20050191 (22) 11.10.2005

(42) 01.12.2005

(71) Մեսրոպ Պետրոսի Շատախյան (AM)

(72) Մեսրոպ Պետրոսի Շատախյան (AM)

(73) Մեսրոպ Պետրոսի Շատախյան, 0001,  
Երեւան, Թումանյան 22, բն.5 (AM)

(54) **Սրտի փականի կենսապրոթեզ**

(57) Գյուտը վերաբերում է պրոթեզներին, մասնավորապես՝ սրտի փականի պրոթեզներին եւ կարող է կիրառվել սրտավիրաբուժության մեջ:

Հայտարկվող սրտի փականի պրոթեզը կազմված է խողովակածեւ տարրից ու թերթիկներից եւ պատրաստված է խոզի կամ կովի սրտապարկից:

Ապահովվում է հումքի մատչելիությունը եւ փոքր տրամագծով փականների պատրաստման հնարավորությունը:

(51) (2006) (11) **1766** (13) **A2**  
**A61K 36/00**

(21) P20050182 (22) 23.09.2005

(42) 01.12.2005

(71) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM)

(72) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM)

(73) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան,  
Երեւան, Գայի պող. 4, բն. 86 (AM)

(54) **Հակաշաքարախտային պատրաստուկ «Արմադ»**

(57) Հակաշաքարախտային պատրաստուկը պարունակում է (զանգվ. %). եղինջ՝ 1.1 - 1.4, եղերդակ՝ 1.1 - 1.4, ավելուկ ալպիական՝ 1.1 - 1.4, սխտոր՝ 20.5 - 21.8, սոխ՝ 20.5 - 21.8, սեխի սերմ՝ 1.1 - 1.4 եւ 50% էթիլային սպիրտ՝ 49.5 - 52.0:

Բարձրանում է բուժման արդյունավետությունը:

(51) (2006) (11) 1767 (13) A2

**B01B 39/02****C02F 1/28****E02B 15/04**

(21) P20050172 (22) 14.09.2005

(42) 04.01.2006

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

**(54) Նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման փքապեռլիտե գտանյութի ստացման եղանակ եւ դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանությանը եւ կարող է կիրառվել ատոմակայանների նավթանյութեր պարունակող հոսքաջրերի մաքրման ժամանակ:

Պեռլիտի հումքը ջարդում են, մանրացնում, չորացնում, տեսակավորում, ջերմամշակում 300-450°C-ում 3-15 րոպե տեւողությամբ եւ փքում տաք վիճակում:

Տեխնոլոգիական գիծը ներառում է տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղակայված ելանյութային պեռլիտի բունկեր, ջարդման, մանրացման, չորացման եւ տեսակավորման սարքեր, փքման ագրեգատ, ծխագազերի հեռացման արտածող օդափոխիչ, փքապեռլիտի նստեցման համակարգ, պատրաստի գտանյութի ընդունման պահեստ եւ կառավարման վահանակ: Տեխնոլոգիական գիծն ունի փքման ագրեգատից առաջ տեղադրված նախնական ջերմամշակման վառարան եւ ջերմախնայարար, որը ունի գազաբաշխիչ սարք եւ միացված է չորացման սարքին եւ նախնական ջերմամշակման վառարանին:

Ապահովվում է հոսքաջրերի մաքրման բարձր արդյունավետություն, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1768 (13) A2

**B02C 25/00**

(21) P20050190 (22) 07.10.2005

(42) 04.01.2006

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Մարինկա Բաղդասարյան (AM), Վարդան Համբարյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տեյրյան 105 (AM)

**(54) Հանքաքարի մանրացման փակ ցիկլով տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը, մասնավորապես աղացում հանքաքարի մանրացման տեխնոլոգիական գործընթացի ավտոմատ կառավարման եղանակներին, եւ կարող է կիրառվել հանքահարստացման, քիմիական եւ շինանյութերի արդյունաբերության մեջ:

Որպես օպտիմալացման չափանիշներ օգտագործելով պատրաստի նյութի առավելագույն ելքի, պատրաստի նյութում օգտակար բաղադրիչի առավելագույն քանակի, էլեկտրաէներգիայի նվազագույն տեսակարար ծախսի արժեքները, մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի կիրառմամբ հաշվարկում են կառավարվող պարամետրերի օպտիմալ արժեքները, որոնց միջոցով կառավարում են մատակարարվող հանքանյութի, աղացի եւ դասակարգչի խյուսի խտությունների քանակները եւ աղացի լցման աստիճանը: Գյուտի համաձայն որպես կառավարվող պարամետր լրացուցիչ գրանցում են նաեւ աղացի թմբուկի պտտման արագության օպտիմալ արժեքը, որով որոշում են աղացի պատերի նոր ներպատման անհրաժեշտությունը:

Բարձրացվում են կառավարման ճշգրտությունը եւ արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1769 (13) A2

**B23B 1/00**

(21) P20050114 (22) 27.06.2005

(42) 15.09.2005

(71) Հենրիկ Բաղդասարյան (AM)

(72) Յենրիկ Բաղդասարյան (AM), Սեյրան Կոխիկյան (AM), Վահե Բաղդասարյան (AM), Նարինե Բաղդասարյան (AM), Կարեն Կոխիկյան (AM)

(73) Յենրիկ Բաղդասարյան, Երեւան, Ավան, Չարենցի 10, բն. 25 (AM)

**(54) Մետաղատաշեղի պլաստիկ դեֆորմացիայի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը:

Մետաղատաշեղի պլաստիկ դեֆորմացիայի որոշման եղանակում ոլորված մետաղատաշեղը տաքացնում են մինչեւ 200°C ջերմաստիճան, ապա սառեցնում՝ ընկղմելով մեքենայի յուղի, նատրիումի քլորիդի եւ ջրի խառնուրդի մեջ, բաղադրամասերի տրված հարաբերակցությամբ: Մետաղատաշեղը հանում են խառնուրդից, ուղղում են, չափում են կտրվածքի եւ մետաղատաշեղի երկարությունը, լայնությունը եւ հաստությունը, ապա այդ տվյալները տեղադրում են մետաղատաշեղի դեֆորմացիան որոշող հայտնի բանաձեւերի մեջ:

Պարզեցվում է մետաղատաշեղի պլաստիկ դեֆորմացիայի որոշումը:

(51) (2006) (11) 1770 (13) A2

**B23F 19/00**

**B23C 3/00**

**B24B 1/04**

(21) P20050063 (22) 11.05.2005

(42) 12.07.2005

(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM), «Գոհար» ԲԲԸ (AM)

(72) Արմեն Թելմանի Տեր-Պետրոսյան (AM), Գագիկ Ռաֆայելի Գրիգորյան (AM), Էռնեստ Ստեփանի Զրիստաֆորյան (AM), Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Ստեփան Շմավոնի Խրիստափորյան (AM), Ալեքսանդր Վալերիի Ղարայան (AM), Արամ Բորիսի Բալասանյան (AM), Արարատ Ռաֆիկի Առաքելյան (AM)

(73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM), «Գոհար» ԲԲԸ, Երեւան, Աճառյան 2/1 (AM)

**(54) Բազմասայր գործիքով կտրման կայունության բարձրացման եղանակ**

(57) Եղանակը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ բազմասայր գործիքով կտրման գործընթացին:

Ընտրված կտրման ռեժիմներով կատարում են դետալի փորձնական մշակում գործիքի բոլոր սայրերով: Չափում են գումարային կտրման ուժը, ապա կառուցում դրա մեծության կախվածության գրաֆիկը գործիքի պտտման անկյունից: Բացահայտում են գումարային կտրման ուժը բնութագրող կետերը, ապա ըստ այդ կետերի կառուցում են գործիքի մեկ կտրող սայրի կտրման ուժի կախվածության գրաֆիկը գործիքի պտտման անկյունից: Այդ կապի միջոցով որոշում են գումարային կտրման ուժի եւ նրա փոփոխականության կախվածությունները միաժամանակ աշխատող ատամների թվից: Դետալի մշակումը իրականացնում են կտրման գումարային ուժի եւ նրա փոփոխականության նվազագույն արժեքներ ապահովող ռեժիմներով:

Բարձրացվում է կտրման կայունությունը եւ համակարգի թրթռակայունությունը բազմասայր գործիքով մշակման ժամանակ, 4 նկ.:

(51) (2006) (11) 1771 (13) A2

**B23K 35/00**

(21) P20050120 (22) 06.07.2005

(42) 15.09.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

**(54) Պաշտպանիչ պատվածքի բաղադրանյութ**

(57) Գյուտը վերաբերում է եռակցման եւ զողման գործընթացներին, մասնավորապես՝ եռակցվող եւ զողվող մակերեսայինները հավաքած մետաղի ցայտերից պաշտպանելու համար պատվածքների բաղադրանյութերին:

Բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ. % հեղուկ կապակ-

ցանյութ՝ 20.0-74.0, անօրգանական լցանյութ՝ 10.0-30.0, մակերեւութաակտիվ նյութ՝ 1.0-10.0, քարամշակման շլամ՝ 10.0-30.0 եւ պնդացման արագարար՝ 5.0-10.0:

Պակասեցվում է հալված մետաղի ցայտերի քանակը, կրճատվում պնդացման տեւողությունը:

(51) (2006) (11) 1772 (13) A2

**B23K 35/24**

(21) P20050118 (22) 06.07.2005

(42) 15.09.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Զեդուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Զովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

(54) **Չողանյութի պատրաստման բաղադրանյութ**

(57) Չողանյութի պատրաստման բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգված.%. փոշենման մետաղական մաս՝ 40.0-80.0, հեղուկ կապակցանյութ՝ 10.0-20.0, անօրգանական լցանյութ՝ 1.0-10.0, մակերեւութաակտիվ նյութ՝ 0.1-10.0, քարամշակման շլամ՝ 5.0-10.0 եւ պնդացման արագարար՝ 3.9-10.0:

Բարձրացվում է զողանյութի շահագործման ժամկետը, նվազեցվում դրա տարածումը:

(51) (2006) (11) 1773 (13) A2

**B23K 35/36**

**B23K 35/365**

**B23K 35/368**

(21) P20050119 (22) 06.07.2005

(42) 15.09.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Զեդուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Զովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

(54) **Եռակցման էլեկտրոդի պատվածքի բաղադրանյութ**

(57) Եռակցման էլեկտրոդի պատվածքի բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ.%. փոշենման մետաղական մաս՝ 20.0-60.0, անօրգանական լցանյութ՝ 8.0-30.0, հեղուկ կապակցանյութ՝ 20.0-30.0, մակերեւութաակտիվ նյութ՝ 0.1-10.0, քարամշակման շլամ՝ 10.0-30.0 եւ պնդացման արագարար՝ 1.9-10.0:

Պակասեցվում է հալված մետաղի ցայտերի քանակը:

(51) (2006) (11) 1774 (13) A2

**B29B 11/12**

**B29C 59/02**

(21) P20050200 (22) 08.11.2005

(42) 04.01.2006

(71) «ՀԱՇ ԵՐԿՈՒ ԵԿՈՆՈՄԻ» ՓԲԸ (AM)

(72) Խաժակ Զրաչիկի Գյուլումյան (AM), Զակար Զովհաննեսի Սարգսյան (AM), Գագիկ Գուրգենի Զարամյան (AM), Վարուժան Վահագի Մելիքյան (AM), Ռաման Արամի Մնացականյան (AM), Արման Ստեփանի Դանիելյան (AM)

(73) «ՀԱՇ ԵՐԿՈՒ ԵԿՈՆՈՄԻ» ՓԲԸ (AM)

(74) Ռ. Զալաշյան

(54) **Էլեկտրահաղորդիչ իրի ձեւավորման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բաղադրյալ նյութից, մասնավորապես՝ ածխածնապոլիմերային խառնուրդներից բարդ մակերեւութապատկերով էլեկտրահաղորդիչ իրի ձեւավորմանը:

Պոլիմերային կապակցանյութը խառնելով ածխածնային լցանյութի հետ, պատրաստում են էլեկտրահաղորդիչ խառնուրդ: Խառնուրդը տեղադրում են շրջանակաձեւ պահունակի մեջ եւ նախնական սառը մամլման ենթարկելով ձեւավորում են նախապատրաստվածք, որը վերջնական մամլման ենթարկելով ձեւավորում են բարդ մակերեւութապատկերով իր: Նախապատրաստվածքը նախնական սառը մամլման ժամանակ ձեւավորում են հարթ մակերեւութներով ու իրի վերջնական պարագծային եզրաչափքով: Վերջնական մամլումից առաջ նախա-

պատրաստվածքը շրջանակաձեւ պահունակի հետ միասին տեղադրում են վառարանի մեջ եւ տաքացնում են ջերմապլաստիկ կապակցանյութի օգտագործման դեպքում մինչեւ դրա հալման ջերմաստիճանը, իսկ ջերմապնդացվող կապակցանյութի օգտագործման դեպքում՝ մինչեւ դրա պնդացման ջերմաստիճանը: Վերջնական մամլումն իրականացնում են սառը մամլակաղապարում, առանց տաք նախապատրաստվածքը շրջանակաձեւ պահունակից հանելու:

Ապահովվում է բարդ մակերեւութապատկերով էլեկտրահաղորդիչ իրերի ձեւավորման բարձր արագությունը եւ արդյունավետությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) **1775** (13) **A2**  
**B60T 1/00**

(21) P20050135 (22) 27.07.2005  
(42) 01.12.2005  
(71) Արթուր Գագիկի Երիցյան (AM), Էդիկ Սանդրոյի Աբգարյան (AM)  
(72) Արթուր Գագիկի Երիցյան (AM), Էդիկ Սանդրոյի Աբգարյան (AM)  
(73) Արթուր Գագիկի Երիցյան, Երեւան, Ա. Բաբաջանյան 93, բն. 20 (AM), Էդիկ Սանդրոյի Աբգարյան, Արարատի մարզ, գյուղ Տափերական (AM)  
(54) **Անվավոր տրակտորային գնացքի օժանդակ արգելակային համակարգ**  
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես ավտոմոբիլային եւ անվավոր տրակտորային գնացքների օժանդակ արգելակային համակարգերին:

Անվավոր տրակտորային գնացքի օժանդակ արգելակային համակարգ, որն ունի հաղորդակային եւ կատարող հանգույցներ: Հաղորդակային հանգույցը կատարված է անվավոր տրակտորային գնացքի քարշակի վրա տեղակայված շարժիչային օժանդակ արգելակային համակարգի ձեւով: Շարժիչային օժանդակ արգելակային համակարգը կազմված է շարժիչի արտածման խողովակաշարից՝ իր խլացուցիչով, եւ դրոսելային փականից, ընդ որում դրոսելային փականը տեղակայված է արտածման խողովակաշարի վրա խլացուցիչից առաջ: Կատարող հանգույցը կատարված

է շփական օժանդակ արգելակային համակարգի ձեւով եւ տեղադրված է անվավոր տրակտորային գնացքի կցասայլակի հետին տնուռ անվակունդերին, ընդ որում շփական օժանդակ արգելակային համակարգը խողովակաշարով միակցված է շարժիչային օժանդակ արգելակային համակարգի արտածման խողովակաշարին՝ դրոսելային փականից առաջ:

Բարելավվում է տրակտորային գնացքի արգելակման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1776** (13) **A2**  
**B60T 8/18**

(21) P20050202 (22) 11.11.2005  
(42) 01.12.2005  
(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)  
(72) Վաչե Լիպարիտի Ռամազյան (AM)  
(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)  
(54) **Ավտոմոբիլի արգելակային ուժերի կարգավորիչ**  
(57) Գյուտը վերաբերում է ավտոմոբիլաշինությանը:

Ավտոմոբիլի արգելակային ուժերի կարգավորիչն ունի իրան, դրա խոռոչում տեղադրված մխոց, որի մխոցակոթը զսպանակած է եւ հենված ավտոմոբիլի հետեւի կամրջակին միակցված ավտոմոբիլի հաղորդակի ոլորալիսեռին: Իրանի խոռոչի ստորին հատվածամասը խողովակաշարով հաջորդաբար միակցված է ավտոմոբիլի հիդրավլիկական արգելակային հաղորդակի գլխավոր արգելակային գլանին եւ ավտոմոբիլի առջեւի անիվների արգելակային մեխանիզմների անվային գլաններին, իսկ իրանի խոռոչի վերին հատվածամասը խողովակաշարով միակցված է ավտոմոբիլի հետեւի անիվների արգելակային մեխանիզմների անվային գլաններին: Իրանը վերեւից փակված է խցանով, որի ստորին մասում տեղակայված է էլեկտրական հոսանքի աղբյուրին միացված կոճ, իսկ իրանի խոռոչի վերին հատվածամասում՝ կոճից ներքեւ, բացակով տեղադրված են մագնիսական նյութից թիթեղներ: Հիդրավլի-

կական արգելակային հաղորդակի գլխավոր արգելակային գլանը եւ ավտոմոբիլի առջեւի անիվների արգելակային մեխանիզմների անվային գլանները միակցող խողովակաշարում տեղադրված է լողան, որն ունի կոճի հակադիր ծայրերի հպակների հետ հպման հնարավորությամբ իրականացված զսպանակած հպակներ:

Ապահովվում է ավտոմոբիլի պահեստային արգելակումը, 1 նկ.:

(51) (2006) (11) 1777 (13) A2  
C04B 14/18  
E04B 1/76  
B28B 1/52

(21) P20050128 (22) 14.07.2005  
(42) 15.09.2005

(71) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)

(72) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)

(73) Յամլետ Յայկի Յակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

(54) **Միաշերտ պատյանով ջերմամեկուսիչ ճկուն շինվածք եւ դրա պատրաստման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ ջերմամեկուսիչ ճկուն շինվածքների՝ ներքնակների, փաթեթների եւ փաթեթների պատրաստմանը եւ կարող է կիրառվել բնակելի եւ արդյունաբերական շենքերի, տեխնոլոգիական սարքավորումների, խողովակաշարերի ջերմամեկուսացման համար:

Շինվածքն ունի թափանցակարերի միջոցով բաժանմունքների բաժանված պատյան եւ այդ բաժանմունքների մեջ լցված կապակցանյութով ներծծված հատիկավոր ծակոտկեն ջերմամեկուսիչ նյութ՝ փքապեռլիտ, փրփրապակի կամ դրանց խառնուրդը: Տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղակայված պատյանի կարման հանգույց, ջերմամեկուսիչ նյութի եւ կապակցանյութի խառնման հանգույց, ձեւավորման հան-

գույց, փոխակրիչ, պատրաստի արտադրանքի ընդունարան եւ կառավարման վահանակ: Ջերմամեկուսիչ նյութի եւ կապակցանյութի խառնման հանգույցը ներառում է շաղախախառնիչ եւ շաղախի բաք: Ձեւավորման հանգույցն ունի շաղախի ընդունարան, բաքին միացված բաշխիչ խողովակների համակարգ: Համակարգի խողովակների թիվը հավասար է պատյանի բաժանմունքների թվին: Տեխնոլոգիական գիծը ունի կարման հանգույցից հետո տեղակայված չորանոց:

Պարզեցվում է տեխնոլոգիական գիծը, մեծանում է շինվածքի ամրությունը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(51) (2006) (11) 1778 (13) A2  
C04B 14/18  
E04B 1/76  
B28B 1/52

(21) P20050129 (22) 14.07.2005  
(42) 15.09.2005

(71) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)

(72) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)

(73) Յամլետ Յայկի Յակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

(54) **Երկշերտ պատյանով ջերմամեկուսիչ ճկուն շինվածք եւ դրա պատրաստման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ ջերմամեկուսիչ ճկուն շինվածքների՝ ներքնակների, փաթեթների եւ փաթեթների պատրաստմանը եւ կարող է կիրառվել բնակելի եւ արդյունաբերական շենքերի, տեխնոլոգիական սարքավորումների, խողովակաշարերի ջերմամեկուսացման համար:

Շինվածքն ունի ներքին եւ արտաքին շերտերից կազմված պատյան: Ներքին շերտն ամրակարերի միջոցով բաժանված է ջերմամեկուսիչ նյութով լցված բաժանմունքների: Պատյանի արտաքին շերտը ամրակարերի միջոցով բաժանված է ներքին շերտին համան-

ման բաժանմունքների, ընդ որում պատյանի շերտերը բաժանմունքների բաժանող ամրակարերն ընդհանուր են ներքին եւ արտաքին շերտերի համար: Տեխնոլոգիական գիծն ունի տեխնոլոգիական հաջորդակայությամբ տեղակայված կարման հանգույց, ջերմամեկուսիչ նյութի զետեղարան, ձեւավորման հանգույց, փոխակրիչ, պատրաստի արտադրանքի ընդունարան եւ կառավարման վահանակ: Ջերմամեկուսիչ նյութի զետեղարանն ունի բաշխիչ խողովակազծերի համակարգ, որի խողովակների թիվը հավասար է շինվածքի բաժանմունքների թվին, իսկ խողովակներից յուրաքանչյուրն ունի փական:

Պարզեցվում է տեխնոլոգիական գիծը, մեծանում է շինվածքի ամրությունը, 2 անկախ կետ, 5 նկ.:

(51) (2006) (11) 1779 (13) A2  
C04B 35/00  
C04B 35/16

(21) P20050101 (22) 15.06.2005  
(42) 11.08.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալեօրիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

(54) **Սիլիկատային խեցեղեն իրերի պատրաստման բաղադրանյութ**

(57) Հայտարկված է սիլիկատային խեցեղեն իրերի պատրաստման բաղադրանյութ, որը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ.% անօրգանական կապակցանյութ՝ 20-59, անօրգանական լցանյութ՝ 20-40, սիլիկատային լցանյութ՝ 20-40 եւ գունանյութ՝ 1-20, ընդ որում անօրգանական կապակցանյութը հեղուկ ապակի է, կիր, կավ կամ ֆոսֆորական միացություն, անօրգանական լցանյութը պեռլիտ է, բազալտ, գրանիտ կամ ապակու թափոն, գունանյութը հանքային գունանյութ է կամ մետաղների օքսիդներ, իսկ սիլիկատային լցանյութը քարամշակման շլամ է:

Ընդլայնվում է խեցեղեն իրերի տեսակաւին, մեծացվում են դրանց ամրությունն ու ջրադիմացկունությունը:

(51) (2006) (11) 1780 (13) A2  
C04B 35/66  
C04B 28/00

(21) P20050102 (22) 15.06.2005  
(42) 11.08.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լեւոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Յեղուշ Անտոնի Գոգինյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Գալեօրիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

(54) **Սիլիկատային հրակայուն նյութերի պատրաստման բաղադրանյութ**

(57) Հայտարկված է սիլիկատային հրակայուն նյութերի պատրաստման բաղադրանյութ, որը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվ.%՝ անօրգանական կապակցանյութ՝ 20-40, անօրգանական լցանյութ՝ 20-40, սիլիկատային լցանյութ՝ 20-40 եւ հրակայուն բաղադրամաս՝ 20-40, ընդ որում անօրգանական կապակցանյութը հեղուկ ապակի է, բոր պարունակող միացություն, պորտլանդեմենտ կամ կավ, անօրգանական լցանյութը պեռլիտ է, բազալտ, գրանիտ կամ քվարցային ավազ, հրակայուն բաղադրամասը շամոտ է, կորունդ, մուլիտ կամ սերպենտինիտ, իսկ սիլիկատային լցանյութը քարամշակման շլամ է:

Ընդլայնվում է հրակայուն նյութերի տեսակաւին, մեծացվում են բաղադրանյութից պատրաստված իրերի ամրությունն ու հարվածադիմացկունությունը:

(51) (2006) (11) 1781 (13) A2  
C04B 38/00  
B28B 5/04

(21) P20050130 (22) 14.07.2005  
(42) 15.09.2005

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)



(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

**(54) Ձերմամեկուսիչ շինվածքի պատրաստման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի բնագավառին, մասնավորապես՝ փքապեռլիտե ջերմաձայնամեկուսիչ շինվածքների պատրաստման տեխնոլոգիական գծերին:

Տեխնոլոգիական գիծը ներառում է ելքի բաժնեչափիչներ ունեցող փքապեռլիտի բունկեր, ջրի, կապակցանյութերի եւ հավելանյութերի բաքեր, ջրի բաքին միացված ջրագիծ, խառնիչ ապարատ, ձեւավորման, ջերմամշակման եւ փաթեթավորման հանգույցներ, պատրաստի արտադրանքի պահեստ եւ կառավարման վահանակ: Փքապեռլիտի բունկերը եւ ջրի բաքն ունեն մուտքի բաժնեչափիչներ, իսկ ջերմամշակման հանգույցը՝ ջերմախնայարար, որը հետադարձ ջրագծով միացված է ջրի բաքի ու փքապեռլիտի բունկերի մուտքի բաժնեչափիչներին, ընդ որում փքապեռլիտի բունկերի մուտքի բաժնեչափիչը միացված է ջրագծին: Ձեւավորման հանգույցը բաղկացած է մամլիչից եւ տակդիրներ ունեցող կաղապարից, իսկ ջերմամշակման հանգույցն ունի տակդիրների հետ վերադարձման գիծ, որը միացված է ձեւավորման հանգույցին:

Պարզեցվում է տեխնոլոգիական գիծը, ընդլայնվում է պատրաստի արտադրանքի տեսականին, մեծանում է շինվածքի ամրությունը, 1նկ.:

(51) (2006) (11) 1782 (13) A2  
C07C 9/00  
C07C 211/00

(21) P20050137 (22) 29.07.2005  
(42) 01.11.2005

(71) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան (AM), Անուշ Լավրենտի Հարությունյան (AM)

(72) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան (AM), Անուշ Լավրենտի Հարությունյան (AM)

(73) Գագիկ Հովհաննեսի Թորոսյան, Երեւան, Սայաթ-Նովայի պող. 37, բն.10 (AM), Լուսինե Անատոլիի Իսակովա, Երեւան, Րաֆֆու 21, բն.16 (AM), Աիդա Ռազմիկի Ալեքսանյան, Երեւան, Ավան թաղամաս, Զուլալի 18, բն.22 (AM), Անուշ Լավրենտի Հարությունյան, Երեւան, Արծրունու 90, բն.12 (AM)

**(54) 1-ացետիլ-1-կարբեթոքսի-3- կարբամոհիլարոպանը որպես կոմպլեքսագոյացուցիչ**

(57) Հայտարկված է 1-ացետիլ-3-կարբեթոքսի-3-կարբամոհիլարոպանը, որը կարող է կիրառվել որպես կոմպլեքսագոյացուցիչ:

Ացետաքացախաթթվի եթերը սենյակի ջերմաստիճանում ենթարկում են փոխազդեցության ակրիլամիդի հետ կալիումի հիդրօքսիդի 10 նորմալային ջրային լուծույթի եւ միջֆազային կատալիզորդի առկայությամբ: Արգասիքը առանձնացնում են ռեակցիայի խառնուրդից լուծահանմամբ՝ բենզոլով:

Ընդլայնվում է կոմպլեքսագոյացուցիչների տեսականին:

(51) (2006) (11) 1783 (13) A2  
C07C 67/00  
C07C 69/00

(21) P20050178 (22) 19.09.2005  
(42) 01.11.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Վռամ Վաղինակի Դովլաթյան (AM), Էլդա Երվանդի Ղափլանյան (AM), Թագուհի Օսիկի Չաքրյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

**(54) 2,4 - երկքլորֆենօքսիքացախաթթվի գամմա-քլորկրոտիլային եթերի ստացման եղանակ**

(57) 1,0:1,0:0,75 մոլային հարաբերակցությամբ վերցված 2,4-երկքլորֆենօքսիքացախաթթուն, 1,3-երկքլոր-2-բուտենը եւ կալցինացված սո-

ղան ենթարկում են փոխազդեցության կատալիզորդի՝ եռամեթիլ-2-քլորեթիլամոնիումի քլորիդի առկայությամբ, տաքացման պայմաններում, ընդ որում տաքացումը իրականացնում են աստիճանաբար՝ 110°C շերմաստիճանից մինչև 120-125°C շերմաստիճան:

Պարզեցվում է եղանակը եւ բարձրացվում 2,4-երկքլորֆենոքսիքացախաթթվի գամմա - քլորկրոտիլային եթերի ելքը:

(51) (2006) (11) **1784** (13) **A2**  
**C09D 1/02**  
**C04B 14/02**

(21) P20050103 (22) 15.06.2005  
(42) 03.10.2005

(71) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ (AM)

(72) Լենոն Մամիկոնի Մակարյան (AM), Արամ Լենոնի Մակարյան (AM), Ռոզա Արեգի Ղազարյան (AM), Հեղուշ Անտոնի Գոգիսյան (AM), Ռոբերտ Անդրանիկի Հովհաննիսյան (AM), Գալերիկ Բենիամինի Շեկյան (AM)

(73) «Արմիտ-Դիամոնդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան (AM)

(54) **Սիլիկատային ներկ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը, մասնավորապես՝ սիլիկատային ներկերի բաղադրանյութերին, որոնք կարող են օգտագործվել քարե, խեցե, փայտե եւ ապակե իրերի ներկման համար, ինչպես նաեւ որպես հրակայուն ներկ:

Ներկը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. քարամշակման շլամ՝ 10-30, անօրգանական լցանյութ՝ 10-30, գունանյութ՝ 1-30, մակերեւութային ակտիվ նյութ՝ 1-30, պնդացման արագարար՝ 5-12, հեղուկ ապակի՝ 33-66:

Մեծացվում է ներկի հարվածային ամրությունը եւ ջրադիմացկունությունը:

(51) (2006) (11) **1785** (13) **A2**  
**C09D 143/00**

(21) P20050164 (22) 01.09.2005  
(42) 01.11.2005

(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական

քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ռիմա Վարազդատի Մանուկյան (AM), Մանուշակ Ալբերտի Ապրեսյան (AM), Արա Մերուժանի Արսենյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Արդյունային փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(54) **Հիդրոմեկուսիչ բաղադրանյութ**

(57) Հայտարկված է հիդրոմեկուսիչ բաղադրանյութ, որը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. բազմաէթիլհիդրոքսիլօքսան՝ 1.0-5.0, ժելատին՝ 0.05-0.1, լցանյութ՝ 0.1-0.15 եւ ջուր՝ մնացածը:

Ժելատինը թողնում են ջրում ուռչելու համար, ապա ավելացնում լցանյութը ու բազմաէթիլհիդրոքսիլօքսանը եւ խառնում 5 րոպե:

Բարձրացվում է բաղադրանյութի հիդրոֆոբ հատկությունները:

(51) (2006) (11) **1786** (13) **A2**  
**C11D 10/00**

(21) P20050138 (22) 01.08.2005  
(42) 01.11.2005

(71) Արթուր Ռոբերտի Ղազարյան (AM)

(72) Արթուր Ռոբերտի Ղազարյան (AM)

(73) Արթուր Ռոբերտի Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)

(54) **Մաքրող մածուկ**

(57) Մաքրող մածուկը ներառում է ցելիթ, էմուլսարար, բորական թթու, մակերեւութաակտիվ նյութ՝ կարբօքսիլմեթիլցելյուլոզ, ջրածնի պերօքսիդ, նատրիումի ֆոսֆատ, նատրիումի եռբազմաֆոսֆատ, նատրիումի հիդրօքսիդ, հոտավորիչ, գլիցերին եւ ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)։ ցելիթ՝ 60-65, էմուլսարար՝ 1.7-1.9, բորաթթու՝ 0.3-0.5, մակերեւութաակտիվ նյութ՝ կարբօքսիլմեթիլցելյուլոզ՝ 0.12-0.14, ջրածնի պերօքսիդ՝ 0.14-0.16, նատրիումի ֆոսֆատ՝ 0.5-0.7, նատրիումի եռբազմաֆոսֆատ՝ 2.3-2.7, նատրիումի հիդրօքսիդ՝ 1.5-1.7, հոտավորիչ՝ 0.04-0.07, գլիցերին՝ 0.03-0.05 եւ ջուր՝ մնացածը:

Բարձրանում է մածուկի մաքրող հատկությունը:

(51) (2006) (11) **1787** (13) **A2**  
**C12H 1/00**

(21) P20050133 (22) 21.07.2005  
(42) 01.12.2005

(71) Ճովինար Լեւոնի Պետրոսյան (AM), Գեւորգ Սերգեյի Մանուկյան (AM)

(72) Ճովինար Լեւոնի Պետրոսյան (AM), Գեւորգ Սերգեյի Մանուկյան (AM)

(73) Ճովինար Լեւոնի Պետրոսյան, 0015 Երեւան, Մաշտոցի պող. 14, բն. 29 (AM), Գեւորգ Սերգեյի Մանուկյան, 0052 Երեւան, Զանաբեռի 10-րդ փող. 8/2 (AM)

(54) **Կոլեկցիոն կոնյակների ստացման եղանակ**

(57) Գյուղը վերաբերում է ալկոհոլային խմիչքների լրացուցիչ հնացման եղանակներին:

Տեսակավոր կոնյակների խառնուրդը լրացուցիչ հնացման համար լցնում են 26,0-30,0 սմ<sup>2</sup>/դմ<sup>3</sup> տեսակարար մակերեւույթ ունեցող կաղնե պահեստատակառների մեջ եւ հնացնում մինչեւ 6 տարի, ստանալով կոլեկցիոն կոնյակներ:

Կայունացվում է քիմիական բաղադրիչների քանակական կազմը, կրճատվում են սպիրտի կորուստները:

(51) (2006) (11) **1788** (13) **A2**  
**C12M 1/00**

(21) P20050162 (22) 24.08.2005  
(42) 01.12.2005

(71) Արտուշ Հովսեփյան (AM)

(72) Արտուշ Հովսեփյան (AM), Լեւոն Մարկոսյան (AM), Ռուբեն Մարկոսյան (AM)

(73) Արտուշ Հովսեփյան, Երեւան, Նոր Նորքի 1-ին միկրոշրջան 81/82, բն. 27 (AM)

(54) **Մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացի կառավարման համակարգ**

(57) Մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացի կառավարման համակարգն ունի ռեակտոր, տվիչներ, տվիչների եւ ռեակտորի միջեւ կապ իրականացնող կառավարման հանգույց, ծրագրավորվող միկրոհսկիչ, տվիչների ընտրման հանգույց: Ծրագրավորվող միկրոհսկիչի պորտերին միացված են մուտքային եւ ելքային ինտերֆեյս համակար-

գեր, որոնց ելքերը միացված են ռեակտորին: Տվիչների ընտրման հանգույցը միացված է մուտքային ինտերֆեյս հանգույցին, իսկ կառավարման հանգույցը՝ ելքային ինտերֆեյս համակարգին: Ծրագրավորվող միկրոհսկիչի պորտերին միացված են նաեւ թվային ցուցատախտակ, ստեղնաշար, ժամացույց եւ հեղուկ բյուրեղային ցուցատախտակ:

Ստեղծված է մանրէների անընդհատ աճեցման գործընթացի ավտոմատ կառավարման համակարգ, 1նկ.:

(51) (2006) (11) **1789** (13) **A2**  
**C21D 9/22**

**C21D 6/00**

(21) P20050196 (22) 25.10.2005  
(42) 01.12.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արտակ Իսրայելի Սահրայյան (AM), Սպարտակ Գարեգինի Մամյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) **Արագահատ պողպատից պատրաստված կտրող գործիքի ամրացման եղանակ**

(57) Կտրող գործիքը ենթարկում են ջերմային մշակման, որից հետո՝ բնական ինքնակազմակերպվող ցածրջերմաստիճանային ջերմամեխանիկական մշակման 350-380°C ջերմաստիճանում 4-8 րոպեի ընթացքում, այնուհետեւ անցկացնում են պոլիգոնացումային թրծաթողում 450-550°C ջերմաստիճանում 20-25րոպեի ընթացքում:

Բարձրացվում են կտրող գործիքների ֆիզիկամեխանիկական հատկությունները, 3նկ.:

(51) (2006) (11) **1790** (13) **A2**  
**C22B 11/00**

(21) P20050195 (22) 25.10.2005  
(42) 04.01.2006

(71) Ռուբեն Արսենի Արզումանյան (AM), Վլադիմիր Յակոբի Մաթոսյան (AM), Կարեն Նորայրի Բաբայան (AM), Վահան Ջանիբեկի Տոնոյան (AM), Վալերի Սուրենի Բաղդասարյան (AM), Սերգեյ Ֆյոդորի Սիլաեւ (US), Սերգեյ Էդուարդի Գրիգորյան (AM)

(72) Ռուբեն Արսենի Արզումանյան (AM), Վլադիմիր Յակոբի Մաթոսյան (AM), Կարեն Նորայրի Բաբայան (AM), Վահան Ջանիբեկի Տոնոյան (AM), Վալերի Սուրենի Բաղդասարյան (AM), Սերգեյ Ֆյոդորի Սիլաեւ (US), Սերգեյ Էդուարդի Գրիգորյան (AM)

(73) Ռուբեն Արսենի Արզումանյան (AM), Վլադիմիր Յակոբի Մաթոսյան (AM), Կարեն Նորայրի Բաբայան (AM), Վահան Ջանիբեկի Տոնոյան (AM), Վալերի Սուրենի Բաղդասարյան (AM), Սերգեյ Ֆյոդորի Սիլաեւ (US), Սերգեյ Էդուարդի Գրիգորյան (AM)

(74) Ռ. Բալաշյան

**(54) Ածխածնային նյութեր պարունակող ոսկեբեր հումքի մշակման եղանակ**

(57) Նախապես մանրատված ածխածնային նյութեր պարունակող ոսկեբեր հումքը՝ հանքանյութը կամ դրա մշակման թափոնակույտը, օքսիդացնում են 250-450°C ջերմաստիճանում 3-6 ժամվա ընթացքում կատալիզորդի՝ V-VII խմբերի տարրերի թթվածին պարունակող միացությունների եւ հավելանյութի՝ ազոտական թթվի աղերի առկայությամբ:

Ապահովվում է հումքի մշակման պրոցեսի արդյունավետությունը:

(51) (2006) (11) 1791 (13) A2

C23F 11/04

C23F 11/00

(21) P20050123 (22) 08.07.2005

(42) 01.11.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նաիրա Կարապետի Թահմազյան (AM), Կարապետ Ծերունի Թահմազյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Պողպատի թթվային քայքայման դանդաղիչ  
(57) Գյուտը վերաբերում է թթվային միջավայրում պողպատե սարքավորումները քայքայումից պաշտպանելու դանդաղիչներին:

(5-1):(10-1) մոլային հարաբերակցությամբ վերցված ամոնիակի ջրային լուծույթը եւ 1,3-երկքլոր-2-բուտենը ենթարկում են փոխազդեցության կատալիզորդի՝ կալիումի յոդիդի ներկայությամբ, 40-70°C ջերմաստիճանում, ստանալով մուգ դարչնագույն համասեռ լուծույթ: Ստացված դանդաղիչը ներառում է հետևյալ բաղադրամասերը, գանգվ.%. N,N - երկ - (3-քլոր - 2 - բուտենիլ) ամին՝ 10-30, N,N - եռ - (3-քլոր - 2 - բուտենիլ) ամին՝ 40-80, 3 - քլոր - 2 - բուտեն - 1 - ոլ 15-50, կալիումի յոդիդ՝ 3-10:

Ընդլայնվում է դանդաղիչների տեսակա- նին, ապահովվում է դանդաղիչի արդյունավետությունը բարձր ջերմաստիճաններում:

(51) (2006) (11) 1792 (13) A2

C30B 29/00

H01S 3/16

(21) P20050194 (22) 24.10.2005

(42) 04.01.2006

(71) «ԲՍԳ Պրոդակշն» ՍՊԸ (AM)

(72) Լեւոն Հարությունի Յովհաննիսյան (AM), Արամ Բենիկի Ղազարյան (AM), Խաչիկ Սահակի Բաղդասարով (RU), Ռոստոմ Մելքոնի Կուրդիսյան (RU)

(73) «ԲՍԳ Պրոդակշն» ՍՊԸ, Աշտարակ-2, Գիտական ՖՀԻ, 8, բն. 3 (AM)

**(54) Լազերային բյուրեղ**

(57) Գյուտը վերաբերում է լազերային տեխնիկայում օգտագործվող բյուրեղների ստացմանը:

Լազերային բյուրեղն ունի խորիում ալյու- մինային նռնաքարի հիմք, նեոդիմի իոններ պարունակող ակտիվատոր, եվրոպիումի իոն- ներ պարունակող զգայունարար եւ բաղադրա- մասերի հետևյալ քիմիական բանաձեւը՝  $Y_{3-x-y}Nd_xEu_yAl_5O_{12}$ , որտեղ  $x=0,003-0,045$ ,  $y=0,016-0,1$ :

Բարձրացվում է բյուրեղում լազերային ճառագայթման առաջացման արդյունավետու- թյունը, 1սկ.:

(51) (2006) (11) 1793 (13) A2

**E04C 1/00****E04B 2/06**

(21) P20050175 (22) 14.09.2005

(42) 01.12.2005

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM), Գեուրգ Գրիգորի Թամարյան (AM)

(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

**(54) Որմնաբլուկ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել շենքերի եւ շինությունների արտաքին եւ ներքին պատերի կառուցման ժամանակ:

Որմնաբլուկը կատարված է երկար ճակատային եւ կարճ կողային նիստեր ունեցող ուղղանկյուն զուգահեռանիստի տեսքով եւ ունի ամրանների տեղակայման եւ բետոնի լցման երկու ուղղաձիգ միջանցիկ բաց հատվածքի փորվածքներ: Որմնաբլուկն ունի որմնաբլուկի վերին երկար նիստի կենտրոնական մասում արված առնվազն մեկ ուղղաձիգ փորվածք, որի մեջ տեղադրված է ջերմամեկուսիչ նյութ: Ամրանների տեղակայման եւ բետոնի լցման փորվածքները արված են վերին երկար նիստի ծայրերում, ունեն ուղղանկյուն հատվածք, իսկ դրանց բացվածքները գտնվում են նույն երկար նիստի ծայրային մասերում:

Բարձրացվում են որմնաբլուկի ջերմամեկուսիչ հատկությունները, 3 նկ.:

(51) (2006) (11) 1794 (13) A2

**E04C 1/00****E04H 2/08**

(21) P20050169 (22) 14.09.2005

(42) 04.01.2006

(71) Համլետ Հայկի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM), Գեուրգ Գրիգորի Թամարյան (AM)

(73) Համլետ Հայկի Հակոբյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

**(54) Որմնաքար**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի ար-

տադրությանը եւ կարող է օգտագործվել շենքերի եւ շինությունների ներքին եւ արտաքին պատերի կառուցման ժամանակ:

